ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Տեղեկացվում է Ձեզ, որ Արմավիրի մարզի «Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2022թ. ապրիլի 4-ին՝ ժամը 14^{00}-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի №14 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 թերթ և 1 էլեկտրոնային նյութ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

24.02.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ստացված թիվ 17-03788-2022
25 02 2022

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2022թ փետրվարի 24-ին կայացած № 14 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022թ փետրվարի 24-ին:

Նիստին մասնակցում են խորհրդի 9 /ինը/ անդամները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին

/զեկ. խորհրդի նախագահ՝ Գ.Եղիազարյան/

ԼՍԵՑԻՆ՝

Գասպար Եղիազարյանը ներկայացրեց, որ «Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում անցկացվելու է դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021թ. փետրվարի 11-ի N 161-Ն որոշման երկրորդ կետի երկրորդ ենթակետը՝ այն է՝ Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարելու մասին որոշում: Խորհուրդը, տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հաշված, առավելագույնը եռամսյա ժամկետում (չներառելով դպրոցական արձակուրդների, արտակարգ և ռազմական դրության ժամանակահատվածը) կազմակերպում և անցկացնում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Հիմք ընդունելով վերոնշյալը

ՈՐՈՇԵՑԻՆ

«Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:

Փաստաթղթերի ընդունման ժամկետ սահմանել 2022թ. փետրվարի 28-ից մարտի 21-ը ներառյալ՝ մինչև 15:00-ն:

Մրցույթը նշանակել 2022թ ապրիլի 4-ին՝ ժամը 14:00:

Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱԳԱՊԻ ԱՐՇԱԿՅԱՆ

Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի « Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

   Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

   1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
   2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
   3. Հաստատության ղեկավարման իրավունքի/հավաստագրի/ պատճենը (բնօրինակի հետ),
   4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը/ /այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով/ , որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
   5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 21-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ , կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, « Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ – ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի ապրիլի 4-ին, ժամը 14:00-ին Գայի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Գայ, Խաչատրյան 2:

Տեղեկությունների համար դիմել
Հեռախոս՝ 093 05-78-22
Էլ. փոստ՝ guidproc@mail.ru: